

551.5(47.925)

W-12

2859 հշ

551-4 (47-325)

Ա-12

Ս. Ա. Բ. Դ. Ա. Լ. Յ. Ա. Ն.

Յերկրաբան և ճարտարագետ

Լիսանցե և Դոկտոր գիտութեանց Պարիզի Համալսարանից  
Վկայալ Պարիզի Պետ — արվեստից Կոնսերվատորիայից  
Անդամ Պարիզի Յերկրաբանական Ընկերութեան

7

---

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՐԵՐ ՀԱՆՔԱՆՅՈՒԹԵՐԸ

/Առաջին մաս/



ՅԵՐԵՎԱՆ — 1928 թ.

В. В. В. В. В.

Содержание  
1. Введение  
2. Описание  
3. Заключение

94753-42




3175  
41

1952 - 1952

ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԱԽԾ



- 1/ Հարավային Յեպիրոսի /չունաստան/ նաֆթային հարստու-  
թյունները: Յերկրաբանական ուսումնասիրություն ֆրան-  
սերեն լեզվով 175 էջ պատկերազարդ և 5 գունավոր քար-  
տեղներով- գինը - - - - - 7ա.
- 2. Հանքաբանություն /պատկերազարդ/ 120 էջ - - - - 50դ.
- 3/ Լենինականի մեծ յերկրաշարժը ֆրանսերեն լեզվով  
պատկերազարդ գինը - - - - - 3ա.
- 4/ Լենինականի մեծ յերկրաշարժը գիտական ուսում-  
նասիրություն հայերեն լեզվով - <sup>240</sup> 240 էջ պատկե-  
րազարդ և քարտեղներով - - - - -  
/Լույս տեսնելու յե մոտ որից/:



# ԸՆԴՀԱՆՈՒՐ ԹԵՎ ՀԱՄԱՌՈՏ

## ԹԵՐԿՐԱԲԱՆԱԿԱՆ

### ՄԻ ԱԿՏԱՐԿ

Թերեվանի և ՇՉմիածնի գավառները գրավում են Հայաստանի բարձրավանդակի հողամասերի մի մասը: Նրանք ներկայացնում են բազմազան կերպարանություններ:

1• Մի Լեռնային վայր, վորը կազմված է Մայմեի Լեռնաշղթայի հյուսիս-արևմտյան ծալքերից:

2• Մի շարք հրաբխային բլուրներ, վորոնք նստում են յերկրորդային դարեգլխի պատկանող սուզանավային հողերի վրա:

3• Թե՛վ վերջապես բարձրակարգ<sup>ի</sup> ղաշտավայրեր ավելի կամ նվազ գոգավոր, ուր տիրապետում են յերրորդային կամ սկահողային կազմություններ:

Դախ պետք է ասել, վոր շրաբանական տեսակետից Թերեվանի և ՇՉմիածնի գավառները հարուստ են աղբյուրներով, վտակներով և գետեկներով՝ նրանց բոլորի հանգամանքը սերտորեն կապված է բնավայրերի հորինվածքի հետ և հետեվանքն են այդ հողամասերում տեղի ունեցած տեկտոնական այն ուժգին յերեվոլյութներին, վորոնց յեն-

Թարկվել են յերկրաբանական զանազան դարեշրջաններում :

Մոլորեցուցիչ և սխալ կը լիներ առանձինն վերցնել այս յերկու զավառների յերկրաբանական պատմությունը առանց ջոշափելու Պոնտոս-կասպյան պարանոցի կրած փոփոխումները Լեռնակազմային շարժումների հետեվանքով :

Արդարև մտեք այս շրջանի մեջ ուր վոր ուզում եք և պիտի դիտեք այնպիսի տպավորիչ հատկանիշեր, վորոնք չի կարելի անջատել Հայաստանի զանազան վայրերում պարզված նմանորինակ յերկուլթներից :

Այն ընդաբույս ուժը, այն մոզական ու խուսվյալ վիճակը, վոր ի հայտ ե գալիս հայկական բարձրավանդակի վրա, ինչպես նաև նրա հյուսիս-արևելյան յեզրապահ Լեռնաշղթաներում, շարունակում ե մեկ կողմից դեպի հյուսիս- Մխըցխա իմերեթյան Լեռնաշարքերը և մյուս կողմից դեպի հարաֆ-արևելք Գարապաղի բարձրակարկաթ գագաթները : Ուստի առանց մանրամասնությանց մեջ մտնելու, շատանանք ասել, վոր յերրորդային կոչված դարեգլխի ընթացքում Հայաստանի հողը յենթարկվել ե մեծ տատանումների, վորոնց հետևանքով այդ դարեգլխում կազմված շերտերը խորտակվել, տակնուվրայվել ու տեղափոխվել են զանազան բարձրությունների վրա :

Մշումը յեղել ե այնքան զորավոր, վոր Միջերկրական ծովը վարակված այդ շարժումից չորացել ու փոխանորդվել ե նախ ծովալճակներով և պպա Լճերով :

Շիրակի ավազանում մեր կատարած ուսումնասի-  
 րություններն թույլատրվում են ասել, վոր յերբ  
 յերրորդային կոչված դարեգլխի վերջերում Հայաս-  
 տանը գրեթե բոլորովին ազատված եք ծովային <sup>Կիրա</sup> գրա-  
 փությունից, այդ Լայնածավալ հողամասը յենթար-  
 կված եք Սարմասական կոչված ծովի տիրապետության,  
 վորը վոչ միայն ազատորեն իշխում եր այժմյան Շի-  
 րակի դաշտին համապատասխանող ամբողջ տարածության  
 վրա, այլ նաև հարորդակցության մեջ եր նա Յերե-  
 վանի և Եջմիածնի գավառների յերրորդական դարեգլխի  
 պատկանող ~~գեա~~ ծովալճակների հետ, ինչպես ապացու-  
 ցանում են նրանց հետզհետե աշատվող ջրերի մեջ  
 ապրող բազմաթիվ թուլամորթների մնացորդները:

Սարմասական կոչված ժամանակաշրջանի վերջե-  
 րում տեղի յեն ունենում Լեռնակազմային շարժում-  
 ներ, վորոնց հետևանքով ինչպես նաև սուղախավակազ-  
 մության յերևույթների պատճառով այդ ծովը քիչ առ  
 քիչ չորանում ե և տալիս ե մի շարք ծովալճակներ,  
 վորոնց մեջ գիպսն ու աղը յենթարկվում են սուղա-  
 խավացման: Կողքի հարուստ աղահանքերը, ինչպես նաև  
 Զրվեժի և Թոխմախան գյուղի գիպսն ու աղային կազմու-  
 թյունները ծնունդ են առնում հենց այդ ժամանակա-  
 շրջանին համապատասխանող ծովալճակների մեջ:

Սյուպես ուրեմն Սարմասական ծովի զանազան մա-  
 սերի բաժանվելով, շնորհիվ սուղախավացման յերե-

վույժների և Լեռնակազմային շարժումներին, վերջ  
ի վերջո վերածվում է նասպից ծովի և Արալի Լճին:

Կովկասում ընդհանրապես և Հայաստանում մասնա-  
վորապես, սարմասական ժամանակաշրջանին պատկանող  
սուզախավային հողերին կրած տակնուվրայությունները  
և նրանց գրաված այլազան քարձրությունները վո-  
րոշապես ցույց են տալիս թե հայկական բարձրավանդա-  
կի կրած վերջին խաղճումները, քայքայումները, սար-  
մասական ժամանակաշրջանին՝ սուզախավային հողերի կազ-  
մությունից հետնագույն են, և թե այդ շարժումներից  
ժնունդ առած պատուվածքներից վերսկսում են Յերեվա-  
նի և Եջմիածնի գավառի հրաբխային թուփումները  
ավելի բուռն քան առաջ:

Ուրեմն վերոհիշյալ գավառները ներկայացնում  
են ծովային միջավայրի վրա տարված մի հարթանակ,  
շնորհիվ հետ-սարմասական կոչված Լեռնակազմային  
ու յերկրակազմային դրական շարժումների, վորոնք  
ժնունդ տվին նաև բազմաթիվ նոր պատուվածքների:  
Կերբին հեղհեղուկ զանգվածների զազերը ոգտագոր-  
ծում են այդ նոր բացված ճեղքվածքները և առաջ են  
բերում հրաբխային այն մեծ բորբոքումները, վորոնց  
արտավիժած նյութերը ծածկում են սուզախավային հո-  
ղերը, և կուտակվելով կազմում են հրաբխային բլուր-  
ները, վորոնք Յերեվանի և Եջմիածնի գավառների գո-  
հարներն են: Կրանք նշում են մեր յերկրի կեղեվի

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԲԱՐՃՐԱՎԱՆՂԱԿԻՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

կրթ մեծ պատուվածքները, կքուժի յենթարկված վայրերը, մեկ խոսքով մեր յերկրի տկար կետերն են մատնանշում:

Հայաստանի բարձրավանդակին աստիճանավոր բարձրացման գործողությունը տեղի յե ունեցել էեռնակազմային շարժումների այսինքն յերկրաշարժերի միջոցով: Բայց ինչպես տեսանք միևնույն ժամանակ հրաբխային բորբոքումներ պակաս չեն յեղել: Նրանք վողողելով այդ հողամասերը, արտավիժումի նյութերով, հարթելով անհավասարությունները և ել ավելի բարձրացնելով էեռները առաջ են բերել ինքնատիպ մի դերոշմ:

Չափազանց ուշադրավ ե դիտել, վոր հրաբխային նյութերի ցայտման կետերը յերբեմն իրական հրաբուխի կոկորդներդ են յեղել, իսկ մերթ ել պարզ խաղավարդներ կամ ճեղքեր զանազան ուղղությամբ:

Այս հատկանիշերից բազմաթիվ որինակներ տեսնվում են Յերեվանի և Նշմիածնի գավառներում: Անփորձ մի ճանապարհորդի համար հրաբխային գործունեյության արդյունք յեղող այդ ձեւերը կարող են կամայական թվել: Բայց բոլորն ել յենթակա յեն վորոշ և հստակ սկզբունքների, վորոնց հանգամանքը հետզհետե բացատրվում և հասկանալի յե դառնում քանի առաջանում ենք գիտական ուսումնասիրությունների մեջ:

Մեր հետազոտած հողամասերը շնորհիվ ուրեմն ստորյերկրյա այն ցասումներին, վորոնք յերբեմն գոռացել են բնության տեսարանների և մարդային ձեռակերտների վրա վոչ միայն ստացել են ինքնատիպ և բուռն ձեվեր, հոյակապ կերպարանքներ, այլ նաև ճոխ են իրենց արտադրությունների մեջ՝ ձորահովիտը ունի իր կանաչ հովիտները, սարահարթերը՝ իրենց հունձքերը, բլրակները՝ իրենց այգեստանները, լեռնային վայրերը՝ իրենց հանքերը:

Այս հակիրճ յերկրաբանական տեսությունից հետո այժմ փորձենք մի քանի խոսք ասել Յերեվանի և ՆՉմիաժնի գավառներում հայտնաբերված արդյունաբերական տեսակետով հետաքրքրական հետևյալ կազմությունների մասին՝

- 1. Գ ի պ ս
- 2. Բ ու ց ո լ ա ն
- 3. Հ զ կ ա ք ա ր
- 4. Մ ա ր մ ա ր
- 5. Կ ի զ ա ճ ո Ղ

Բացի սրանից մենք անցողակի կը մատնանշենք նաև մեր հետազոտության ընթացքում փայտնաբերված նոր հանքանյութերի մասին:

## ԳԻՊՍ ԿՍՄ ԳՆՃԱՐԱՐ

Յերեվանի գավառի գիպսային կազմությունները ներկայանում են Ջրվեժի, Վոդշաբերթի, Շորբուլակի և Ջրաշենի հողամասերում: Նրանք պարփակված են, խորունկ ակոսներով կտրված և հրաբլխային բլուրներով ընդլուծված մի տեսակ վայտաձեւ խավափոսում, վորի բացվածքը նայում է դեպի Արաքսի հովիտը:

Վերոհիշյալ գյուղերը նշում են ավելի կամ նվազ ճշգրտորեն զանազան մեծ ծալքերի կտրտված ու քայքայված խավազազաթները: Նրանք գտնվում են Յերեվանից 6 — 10, 7, և 8 կիլոմետր հեռավորության վրա և ունին վոդորմեւի ճանապարհներ խորունկ հեղեղատափ փոսերով ընդհատված:

Հետազոտված Լեռնային կազմությունները ներկայացնում են հետևյալ տեսակները՝

1\* Բյուրեղացած գիպս+ այս տեսակը գտնվում է Յերեվանի շրջակայքը ներկայացող գրեթե բոլոր կավահողերի մեջ: Նրա գույնը դեղնորակ է յերբեմն կապուտակ. կազմում է բազմաթիվ փոքր յերակներ կավահողերի մեջ մտած, վորոնք Հեն պարունակում գործվոչ մի գործարանային մնացորդ:

2\* Խիտ կերտվածք ունեցող զաճաքար+ այս կազ-

մուծյունը տեսնվում է մասնավորապես թոխմախան գյուղի և Ջրվեժի հողամասերում: Դա ունի մոմոտ կտրվածք, բավականին կարծր է և ներկայանում է զանազան մեծ ու թյուն ունեցող զանգվածների ձևով կավահողերի մեջ:

3• Երրկամնաձև զաճաքար: Այս տեսակը նաև գտնվում է Ջրվեժի և Փոքրաբլուեր կոչված վաքրորում: Դա նաև ներկայանում է ավելի կամ նվազ մեծատարած պոլոճիկների ձևով, վորոնք մտնում են կավահողերի մեջ:

պիսի


4• Դաքարակերտ զաճաքար: Այս կազմուծյուն ունեցող գիպսերը գտնվում են Ջրվեժի շրջակայքը մեծ զանգվածների ձևով: Երբեմն բյուրեղացած վիճակում, իսկ մերթ ել անկերպարանք: Դրա գույնը սպիտակ է կամ դեղնորակ, գորշագույն, կիսաթափանց և ունի հայելացու հատիկներ:

5• Փոշետեսակ գիպս: Այս տեսակը ներկայանում է թոխմախան գյուղի և Ջրվեժի մեջտեղ յերկարող բլուրների լանջքերում, մեկերեսային բոբոսների ձևով կավային հողերի մեջ:


6• Թերթավոր գիպս: Այս հորինվածքը ունեցող զաճաքարերը գտնվում են Փոքրաբլուեր կոչված վայրորում ներկայացող խտուտակ կավահողերի մեջ:

7• Դեյարդային կերտվածք ունեցող գիպս: Այսպիսի կազմուծյուն ներկայացնող զաճաքարերը

...  
 ...  
 ...  
 ...  
 ...



...  
 ...  
 ...  
 ...  
 ...



...  
 ...  
 ...

24



7. Նյարդային կերտվածք ունեցող գիպս :

Այսպիսի կազմութիւնն ներկայացնող գաճաքարերը ներկայացնում են չափազանց նուրբ զուգահեռական նյարդներ մետաքսանման փայլ ունեցող : Նրանք գտնվում են խտուտակ կալվածողերի մեջ անկարելորդ յերակների ձևով :

Յերրորդային կոչված դարեգլխում տեղի ունեցած լեռնակազմային շարժումներ վոչ միայն հեղաշրջել են վերոհիշյալ կազմութիւնները, այլ նաև առաջ են բերել նրանց մեջ բազմաթիվ խորունկ պատուվածքներ, ծնունդ տալով այդպիսով հրաբխային ուժգին արտալիժումների, վորոնք տեղ-տեղ գրեթե ամբողջովին ծածկում են գիպսային բացվածքը : Բացի սրանից քայքայման յերեվույթներից, սառնամանիքն ու սառնահալը, անձրևներն ու վտակները, մեկ խոսքով յերկրի արտաքին զորութիւնները ուժգին կերպով ներգործել են շրայա շրջանի կազմութիւնների վրա և առաջ են բերել նրանց մեջ խռովյալ և չարճրկված մակերեսով մի հողամաս :


Պարզ ե վոր գիպսային կազմութիւնները ծագում են նաև առել ծովալճակների կամ այնպիսի ծովային ավազանների մեջ, վորոնք գրեթե շատ քիչ կամ բոլորովին չեյին ստանում վոչ անուշ ջրեր և վոչ ել աղի, կամ ավելի ճիշտը շատ մեծ գծվարութիւններ հաշորդակ-

2859

3175  
41



ցության մեջ ելին իսկական ծովային միջավայրի  
 հետ: Մեր ժամանակաշրջանում, վորպես որինակ  
 այսպիսի ավազաններում կարելի յե ցույց տալ  
 նասպից ծովի Ղարա-Պողազ կոչված վայրը, վորը  
 նեղ քեվ վոչ խորունկ մի կանալի միջոցով միայն  
 հաղորդակցությունն է պահպանում իսկական ծովային  
 միջավայրի հետ: Ղարապողազի այդ ծովախորշը չի-  
 ստանում անուշ ջրի վոչ մի վտակ/վոչ մի գետակ,  
 ինչ վոր անհրաժեշտ է թվում վոչ միայն գիսսային  
 կազմությունների նկատմամբ, այլ նաև ընդհանրա-  
 պես ծովային ջրերի մեջ Լուծված վիճակում գտնվող  
 բազմատեսակ աղերի սուզախավացման և բյուրեղացման  
 համար:



Բացի սրանից այդպիսի ավազաններում ներուժ  
 շոգիացման գետկանքով, վոչ միայն ջրերի հազումը  
 բարձրանում է, այլ նաև ստեղծվում է, շարունակ  
 մենույն <sup>ստեղծվում</sup> ծուխեցող մի հոսանք, վորը գնում է ծովա-  
 յին միջավայրից դեպի ծովալճակային միջավայրը:  
 Պիտի ասել նաև, վոր ներուժ շոգիացման յերեվույ-

Թը իր կարգին արդյունքն ե նույն բնավայրում  
 տիրապետող չոր և գրեթե անապատային մի կլիմա-  
 յի գոյության: Շնորհիվ ուրեմն ստեղծված այն  
 հասանքին, վորը անընդհատ սնուցանում ե ծո-  
 վալճակային միջավայրը նորբերումներով, ինչ-  
 պես նաև շոգիացման ներուժ գործունեյության,  
 ծովալճակային ջրերի հազման աստիճանը հետզհե-  
 տե բարձրանալով հասնում ե այն ճգնական կետը,  
 ուր լճեծված վիճակում գտնվող գիպսը յեսթար-  
 կվում ե բյուրեղացման: Նույն ձևով տեղի յե  
 ունենում նաև մյուս աղերի կազմությունը:  
 Ճիշտն ասած, յերեվութայես այս պարզ գործո-  
 ղության ընթացքում պիտի նկատի ունենալ ուրիշ  
 վոչ նվազ կարեվոր և ուշագրավ յերեվութներ,  
 վորոնց մանրամասնությանց մեջ մտնել ավելորդ  
 ենք համարում, ուստի բավականում ենք շեշտել  
 միայն, վոր շայաստանի յերկրաբանական պատմու-  
 թյան ընթացքում վերոհիշյալ գործողություննե-  
 րը կրկնվել են բազմաթիվ անգամ, ինչպես ասա-  
 ցուցանում են զանազան փոխակարգություններ  
 ներկայացնող շրվեժի գիպսային կազմություններ  
 րը, և նաև չենք վարանում ասել առային կազմու-  
 թյունները: Եթե նկատի ունենանք մի կողմից  
 այս շրջանի կազմություններում տեսնված առա-  
 յին աղբյուրները, առային հետքերը, աղաբեր

25


Университетский музей в Петербурге:

կավասողերը, մյուս կողմից Ջրաշեն գյուղում վերջերս տեղի ունեցած ուշադրավ վոսպնաձեւվ հողային կքումները և ուռուցքների ձևով հողային վերեւքները, վոչ մեկ տարակույս չկա, վոր այս շրջանում մենք գտնվում ենք ավելի կամ նվազ կարեւոր աշային կազմությունների առաջև: Այս ուղղությամբ անհրաժեշտ է կատարել յերկրաբանական և ուրջ ուսումնասիրություններ: Ակներով է, վոր աղաբեր կավասողերի կազմությունը ընդհատել աղերի կազմությունը իրենց բնականոն վախճանից շատ առաջ: Ֆրանք են, վոր պահպանել են վորպես անթափանցական խավեր, աշային կազմությունների տանիքը: Հավանականորեն այդ կավասողերը փոխադրվել են ժովաբւճակային միջավայրում, ժովային հառաջգնացությունների հետևանքով, վորոնք ընդհատել են աշային կազմությունները: Յեթե այդ կավասողերը նշում են աշային սուղախավացման մի ժամանակաշրջանի վախճանը, միաժամանակ նրանց գալցիում սյուլլաբի պարունակությունը ցույց է տալիս մի նոր ժամանակաշրջանի սկիզբը, վորի ընթացքում կազմվում են նույն կավասողերում դիտված անդրիտները:

Վերջապես պիտի նկատի ունենալ յերկրորդային և յերրորդային կոչված դարեգլուխների ընթացքում շայաստանի հողին կրած ուժգին խախտումների հետեւանքով առաջ յեկած փոփոխությունները, այլպիսին մի

ժամանակ ուր աշային և գիպսային կազմությունները վաղուց ծածկվել են ուրիշ սուզանալների կողմից: Այդ ուժերն խախտումների շնորհիվ գիպսային և աղաբեր կազմությունները տակնուվրայվել, խորտակվել և բարձրացել են յերկրի մակերեսի մոտերը:

Ջրաշեն գյուղում մասնավորապես քայքայման յերեվույթները ժամանակի ընթացքում պատռել են նրանց անթափանցական պատյանը և այդպիսով թյուրացրել մակերեսային ջրերի թափանցումը մինչև աղաբեր կազմությունները, ուր առաջ են բերել ավելի կամ նվազ այն կարեվոր ավերները, վորոնք պարզվում են այսոր մեր աչքին առջև:



Դժբախդաբար պիտի խոստովանինք, վոր մեր արշավախումբի բնույթը, նրա հետապնդած նպատակը, նրան տրամադրված ժամանակն ու միջոցները թույլատրած չեն մեզ ունենալ ի ձեռն բավականաչափ ատաղձ տիրաբար վերականգնելու այս չափազանց հետաքրքրական հողամասի յերկրաբանական կառուցվածքը:

ՄԱՐԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ

Այս գրքի հեղինակը Գրգոր Գրգորյանն է, որը  
հրատարակվել է Երևանում և թվականը 1925 թվականն է  
Երևանում հրատարակվել է Գրգոր Գրգորյանի կողմից

Գրքի հեղինակը Գրգոր Գրգորյանն է, որը  
հրատարակվել է Երևանում և թվականը 1925 թվականն է

Այս գրքի հեղինակը Գրգոր Գրգորյանն է, որը  
հրատարակվել է Երևանում և թվականը 1925 թվականն է  
Գրքի հեղինակը Գրգոր Գրգորյանն է, որը  
հրատարակվել է Երևանում և թվականը 1925 թվականն է

25

Գրքի հեղինակը Գրգոր Գրգորյանն է, որը  
հրատարակվել է Երևանում և թվականը 1925 թվականն է

Այս գրքի հեղինակը Գրգոր Գրգորյանն է, որը  
հրատարակվել է Երևանում և թվականը 1925 թվականն է

Գրգոր Գրգորյանի Գրքերի Գրքեր

Այս գրքի հեղինակը Գրգոր Գրգորյանն է, որը  
հրատարակվել է Երևանում և թվականը 1925 թվականն է  
Գրքի հեղինակը Գրգոր Գրգորյանն է, որը  
հրատարակվել է Երևանում և թվականը 1925 թվականն է

ՅԵՁՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Արդյունաբերական տեսակետով հետաքրքրական են խիտ, յերիկամնաձև, շաքարակերտ և թերթավոր կեփովածքներ ներկայացնող զաճաքարեր: Միմիայն Ջրվեժի զաճախարերը կարող են բավարարել Հայաստանի կարիքները յերկար տարիներ:

Գործնական կյանքում գիպսը կիրառումները բազմաթիվ են: խիտ կերտվածք ունեցող զաճաքարերից կարելի յե պատրաստել զաճեր: Մմեն վոք գիտե թե կա՛վե ստացվում ե զաճաքարերի այրումից: Եթ մի տեսակ սպիտակ նյութ ե վորը Հափազանց շատ ե գործածվում հողագործության և մանավանդ բնակարանային շինարարության մեջ: Գաճ պատրաստելու համար պիտի յենթարկել գիպսը 12օ-13օ աստ՝ շերմության: Յեթե շերմության աստիճանը բարձրանա 15օ-ի ստացված զաճը կորսնցնում ե իր կպչելու հատկությունը: Իսկ յեթե այդ շերմությունը շատ բարձր ե լինում ձեռք բերված զաճը լինում ե բոլորովին անպետք:

ՔԱՆՊԱԿԱԳՈՐԾՆԵՐԻ և արձանիկներ կաղապարող արտիստների գործածած զաճը պատրաստվում ե իրզականման բյուրեղացած գիպսերից: Երանք թե կերտվածքը նուրբ ե և թե Հեն պարունակում ոտար տառեր և աշտեղություններ

ՃԱՐՏԱՐԱՌԵՏՈՒԹՅԱՆ մեջ գործածված , ,ստյուք, , կոչված նյութը ուրիշ բան չէ յեթե վոչ սովորական գաճը, վորին միացրած են վոսկրի մածիտ և գունավորած են այդ խառնուրդը հաստատուն նյութերով: Հաջողությամբ պատրաստված ստյուքը տալիս է մարմարի կերպարանք:

Գիպսից պատրաստում են նաև ճնշված գաճ, վորին միացնում են նախապես յեռացած ջուր վորոշ աստիճանի ջերմություն ունեցող, հետո այդ խառնուրդը յենթարկում են 100-ից 2,000 ֆաւար կիլոգրամ մի ճնշումի, պահելով հանդերձ նրա ջերմության աստիճանը 80-90-ի: Ճնշված գաճը կարծրանալից հետո ներկայացնում է մարմարի կերպարանք:

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ մեջ գիպսն ու անիտրիտը գործածում են վորպես հողերը պարտաացնող նյութ: Բյուսահողերի մեջ նրանք փոխակերպում են կալիոնի գարբոնատը / / սյուլֆատ պոտասիումի, վորը ծծվում է բույսերի կողմից:

Հիմնվելով այս շրջանում մեր կատարած յերկրաբանական հետազոտությունների վրա, պետք է թսենք նաև, վոր նա ներկայացնում է չափազանց ուշագրավ յերեվոլյութներ մարդկային կազմությունների տեսակետով: Գկատի ունենալով այս պարագան անհրաժեշտ ենք համարում այս հողամասի յերկրաբանական մանրամասն և լուրջ ուսումնասիրությունը մինչև Գավալուլի շրջակայքը և նույնիսկ ավելի հեռուները:

ԲՈՒՅՈՒՆՆԱԵՒՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ի՞նչ են բուցուլանները :

Բուցուլանները մի մասնավոր վիճակում մեծ քանակու-  
թյամբ սիլիցիում պարունակող նյութեր են : Նրանք մի-  
միայն ջրի հետ շաղախվելով չեն կարող պնդանալ ինչպես  
կիրերն ու ցեմենտները : Բայց, յեթե նախապես նրանց միա-  
ցնում են կիր, այս վերջինը մաս առ մաս խառնվում է  
բուցուլանի հետ, գործածությունից հետո, և այսպիսով  
փութացնում նրա կարծրացումը : Շնորհիվ նրանց այս  
հատկության կարելի յե գործածել պարարտ կիրն իսկ  
ջրերի ազդեցության յենթակա շինությունների մեջ :  
Սվեւաքնեւով նրա մեջ բուցուլան :

Բուցուլանները բաժանվում են 2- խմբերի՝ բնական  
բուցուլաններ և արվեստական բուցուլաններ :

Բնական բուցուլաններ սեռային անունով պիտի հաս-  
կնալ՝ շոենոսի հովիտի տրասը, Պուցուլի և Վեզուվի  
արտավիժումները, Մորվանի և Սւլպյանների որտոֆիրա-  
յին կոչված հոսումները և Սանտորինի կազմություննե-  
րը : Մրանք բոլորն եւ ունին հրաբխային ծագում և  
պատկանում են տրազիթներ կոչված քարերի մեծ ընտանի-  
քին :

Նրանք պարզորեն տրազիթային բաղադրություն ունե-  
ցող փխարներ են, վորոնք առաջ են յեկել, մասնավորապես  
յերրորդային կոչված դարեգլխի վերջերը տրազիթային արտա-

արտավիժումներով բորբոքման մեջ գտնվող հրաբուխներին զայրուցքներինց։ Գալով արվեստական բուցուղաններին, նրանք ստացվում են վոչ բարձր շերմության յենթարկված թերթաքարերինց կամ կավապողերինց։

Հայաստանը չափազանց հարուստ մի յերկիր է տրազթային կազմությունների տեսակետով, մանավանդ Յերեվանի և Եջմիածնի գավառները։

Ասացինք արդեն թե յերրորդային կոչված դարեգլխի ընթացքում կովկասյան պարանոցը յենթարկվել է մեծ ցնցումների, վորոնց հետեվանքով տեղի յեն ունեցել հրաբխային ուժգին պոթկումներ, գրեթե բոլորն ել զրազթային բնույթ ունեցող մանազանդ հետսարմասական կոչված Լեռնակազմային շարժումների հետեվանքով բորբոքման մեջ գտնվող հրաբուխները։ Արդ նկատի ունենալով, վոր Հայաստանում վերոհիշյալ ժամանակաշրջանին պատկանող հրաբխային արտավիժումները նստում են տեղ—տեղ յերրորդային դարեգլխից <sup>ընդհանր</sup> խորտակված և տեղափոխված սուղախավային հողերի վրա, պարզ է, վոր այդ տրազթային բնույթ ունեցող հրաբխային գործունեյությունները նույն դարեգլխի պատկանող հողերի կազմությունինց մասամբ հետնագույն են։

Ճիշտ է, վոր Հայաստանի տրազթային հրաբուխները բոլորն ել չեն պատկանում նույն ժամանակաշրջանին, և հենց այդ է պատճառը, վոր նրանք ունե-

27

... 27 ...

... 27 ...

... 27 ...

27 ...

... 27 ...

... 27 ...


ունենալով հանդերձ միևնույն հատկանիշերը պահում են միրենց անհատականութունը, թե ստեղծումի, թե արտավիժումի, թե կերտվածքի, թե բաղադրության և թե ձեւերի տեսակետով:

Եւբրոուսի, Կազբեզի և Մրազածի հին շեղձակուտակների ուսումնասիրութունը ցույց ե՛ր տվել գրանթային բազմաթիւ բեկորների գոյութունը: Ինչվոր թույլատրում մեզ ասել թե չորրորդային կոչված դարեզլիում նաև տեղի յեն ունեցել քրազթային բնութ ունեցող բորբոքումներ, բայց այդ արտավիժումները նաև մասամբ հետնադույն են սառնակազմային շրջանից:

Տրազթային բորբոքումների մեխանիզմը յերեւութապես պարզ, սակայն և այնպես խիստ բարդ և բազմատեսակ է: Ակներեւոյ է, վոր թե՛ շերաբաղի շրջանում ներկայացող տրազթային հրաբուխների գործունեյութութունները տեղի յեն ունեցել յերրորդային կոչված դարեզլի ընթացքում տեղ, նկատի ունենալով, վոր նրանց շրջակայքը գտնվող յերկրորդային դարեզլի պատկանող սուզախավային կազմութունները վոչ միայն խորտակված վիճակի մեջ են գտնվում, այլ պատուած ու ծածկված են տրազթային թանձր արտադրանքների մանր նյութերով:

Վերելքի և ծալքավորման այն շարժումները, վորոնցից վարակվել են վերոհիշյալ կազմութունները, առաջ են բերել մեծ բեկումներ սուզախավային հողերի

մեջ, վորոնց միջոցով ներքին կորիզից <sup>էր</sup> ~~գեղ~~ հեղուկ  
 նյութեր բարձրանալով ստեղծել են տրազթայիտ-անդե-  
 զիտային ժայթքումներ՝ ցիներիտային առատ արտադ-  
 սումներով:




(  Բուկուլապիակալմեդոն)

Պարզ է, վոր թեջերաբաղ զյուզի ալժյան հո-  
 ղամասը վերոհիշյալ դեպքերի ժամանակաշրջանում  
 յեղել է ծովալճակային մի միջավայր, ուր կուտակ-  
 վել են հրաբուխների կոկորդներից արձակված և զա-  
 ղային պայթյուններից փոշիի վերածված նյութերը:  
 Տրազթային վերելքի ընթացքում տեղի յեն ունեցել  
 նաև տյուֆային և ցիներիտային արտավիժումներ:

Թեջերաբաղի սարահարթի վրա ներկայացած տրազթա-  
 յին կազմությունները դոմիթ կոչված տեսակից են:

Իսկ իսկական հրաբխի Լանջբերում գտնվում է  
 նմանապես իսկական տրազիթը, վորը տեղ-տեղ ներկայա-  
 ցում է տրազթա-անդեզիտային բնույթ: Միալ և միան-  
 զամայն մոլորեցուցիչ կը Լիներ ասել թե դոմիթը  
 ուրիշ բան չէ յեթե վոչ նույնինքն քրասը: Հետե-  
 վաբար հասկանալի յե, վոր մենք դժվարանում ենք

Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.




Large block of faint, illegible text in the middle of the page, likely bleed-through from the reverse side.

Handwritten text in a cursive script, possibly a signature or a name: *Генералъ Гурьевъ*

28

Faint, illegible text at the bottom of the page, likely bleed-through from the reverse side.

դժվարանում ենք տալ նրան այն հատկությունները,  
 վոր տրասսը ներկայացնում է, վորպես կաշուն մի  
 նյութ քանի վոր դեռ հնարավորությունն չենք ունե-  
 ցել ուսումնասիրել այս հարցը:



Հայաստանի յերկրաբանական պատմությունը ընդ-  
 հանրապես և նրա տարասեռ այն կազմությունների ու-  
 սումնասիրությունները մասնավորապես, վորոնք փխար,  
 տրաս, ցիներիտ, հրաբխային փխ տյուֆ, բրեշ, շեղշա-  
 կուտակ են կոչվում կարող են հայթայթել յերկարա-  
 շուկն և վերին աստիճան հետաքրքրական աշխատանքնեփ,  
 նախ վորովհետև նրանք կազմում են Հայաստանի հրաբուխ-  
 ների առ նվազն 5/6 մասը, հետո վորովհետև նրանք գործ  
 նական կյանքում ունեն ոգտակար վորոշ կիրառումներ,  
 թե շինարարական և թե ճարտարվեստական զանազան ձեռ-  
 նարկներում, վորոնց մասին մենք հետագայում կանդ-  
 րադառնանք ավելի մանրամասնորեն: Այժմ կը շատանանք  
 դիտել տալ, վոր ԵՉմիաժնի գավառում Մուղնի և Հանա-  
 վանք կոչված գյուղերի ստորոտից անցնող քացախ գե-  
 տակի խոր հատակում ներկայացող հրաբխային կուտված  
 արտադրանքները ունին գրեթե միևնույն <sup>հարյր</sup> փակասիքները:

Նրանք մի տեսակ ցիներիտային տրասներ են:

Յեթե վերցնենք մի հորիզոնական կտրվածք այդ կազմու-  
 թյունների մեջից տեսնում ենք, վոր կուտված արտադր-  
 րանքների ցեմենտը նախ ճերմկեկ, հողուտ, փխրուտ,  
 փոքր և թեթև չեչաքարերի բեկորներով էի հետզհետե  
 դառնում և ավելի մուգ և ավելի հարակից: Այս յերե-  
 վույթը դիտվում և գրեթե բոլոր նմանորինակ կազմու-  
 թյունների մեջ, վորոնք գիտի նկատել տրազիային և  
 անտիդիտային բորբոքումների մի տարբեր ֆազիյեսը:  
 Ցինեթիտները ուրեմն հրաբխային արտադուրյունների  
 արտադրանքներ են, վորոնց կարելի յե հանդիպել ամե-  
 նուրեք, զանազան բարձրուրյունների վրա, հրաբխա-  
 յին զանգվածների կենտրոնից սկսյալ մինչև նրա ծայ-  
 րագույն շրջապատը: Մեկ խոսքով նրանց բոլոր մասերը<sup>ում</sup>  
 թայց պիտի դիտել տալ, վոր նրանք էինում են ավելի  
 կամ նվազ մեծատարած ըստ իրենց գրաված կետերի պայ-  
 մաններին:



Ընդհանրապես վերոհիշյալ կազմուրյունները ներկա-  
 յանում են յերկու տարբեր վիճակներում՝ անվթար կամ  
 փոփոխված: Առաջին պարագայում նրանց բաղադրուրյան  
 մեջ մտնում են միմիայն հրաբխային տարրեր, այսինքն  
 տրազիթի կամ անտեդիտի բեկորներ ածխացած տարրեր,

Faint, illegible text at the top of the page, possibly bleed-through from the reverse side.



Faint, illegible text centered below the sketch, possibly a title or description.


Faint, illegible text below the sketch, possibly bleed-through from the reverse side.

29

Handwritten text in a cursive script, possibly a signature or a name, located below the number 29.

Faint, illegible text at the bottom of the page, possibly bleed-through from the reverse side.

ապակիացած չեչաքարեր, հոմաքարերի կտորներ, յերկա-  
 թամազնիզային բյուրեղներ, այս վերջինները հարաբե-  
 րաբար շատ քիչ են լինում: Ըստ այս տարրերի ցու-  
 ցադրած մեծության ցիներիտները կարող են ունենալ  
 նուրբ հյուսվածք, խիտ կերտվածք, ինչպես Մուղնիի  
 և Հանավանքի կազմությունները, վորոնք խստիվ խո-  
 սելով չի կարելի նույնացնել իսկական տրասների հետ:



Հանավանքի փրեմոսիտային կազմությունը:

Ցիներիտները կարող են կազմել նաև հողաքարեր,  
 յեթե նույն իսկ բրեշներ, քարակուտներ, վորոնք  
 փոխանցվում են հրհեղուկ ծագում ունեցող մեծ քա-  
 րակուլտերի: Հանավանքում, ֆացախ գետի վրա բաժվող  
 մի ձորակի կողերում տեսնվում են ուշագրավ մի  
 բացվածք, վորի ստորին մասը ներկայանում է տեղա-  
 փոխված մանրախիճը, հետո սկսվող չեչաքարերի գե-  
 ղեցիկ նմուշներ պարունակող, ցիներիտներ, բրեշ և  
 վերջապես հրաբխային արտադրանքներ: Մովորաբար մա-  
 քուր ցիներիտների գույնը լինում է խիտ բաց, գրեթե  
 ճերմկեկ կամ գորշորակ: Նրանց բաղադրության մեջ

մտնում են տրաքիտային փոքր չեչաքարեր ամֆիբոլի,  
բիոդիտի բյուրեղներ, ինչպես նաև տափակացած որթո-  
զի անկից բյուրեղներ:

Հանավանքի շրաշացների շրջակայքը դիտվում են  
նմանորինակ կազմություններ, բայց տարակուսում  
ենք նրանց իսկական բնույթի մասին: Տրաքիտային  
ցիներիտները ընդհանրապես քիչ են լինում և դժվա-  
րավ են բնորոշվում անտեգիտային շեշակուտներից  
և սյուլֆերից:




Դիտելի յե, վոր տեղ-տեղ ցիներիտային կազմու-  
թյունները ներկայանում են սյուլֆացած վիճակում,  
շաշախլած ալեելի կամ նվազ հողուտ տարրերով, ինչ-  
պես տեսնում ենք Հանավանքում և Արզնիում:

Այնքերեվ ե, վոր հրաբխային բորբոքումների ժա-  
մանակ տեղի ունեցած սառնահալը, հեղեղանման անձրեվ-  
ները առաջ եյին բերում ֆոսֆորուկ հսկա մի զանգված  
ծի կազմությունը, վորը իր ժխորիվ հոսումի ընթաց-  
քում տեղափոխում եր հրաբուխների կոկորդներից  
մինչև նրանց փեշերը մեծ քանակությամբ արտաձգված  
հրաբխային բեկորներ:



Բացի սրանից տրագլիային հրաբուխները պարունակում են յերբեմն իրենց ծոցում ներքին խառնարան լճակներ, վորոնք ժայթքումի ընթացքում յերբ թափվում են յերկրի մակերեսի վրա հրաբուխների ներքին մոխիրների և մանրաքարերի հետ միաժամանակ ծնունդ են տալիս այնպիսի հսկա տղմուտ հոսումների, վորոնք կարող են տարածվել շատ հեռուները, պատճառելով հաճախ մեծամեծ ավերներ, ինչպես պատահած է Հայաստանում 1840 թ. Արարատի վերջին բորբոքումների ժամանակ. նրա տղմուտ արտավիժումները հիմնահատակ կործանած են Ակորի կոչված գյուղը, վոր գտնվում էր Արարատի Լանջքերում:



Ավելորդ ենք համարում յերկար ծանրանալ այսպիսի հրաբխային զայրուցքների մասին, վորոնք հազար անգամ ավելի աղետաբեր են ահարկուլ յեն իրենց մեխանիքական արդյունքների տեսակետով, քան Լավային հեղեղումները, կամ արտաձուլթյան յերեվուլթները:

Առ այժմ այսքան միայն:



ՅԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՒՑՈՂԱՆԱԿԱՅԵՑՊ

ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ՝

Յերեվանի և Նշմիածնի զավառները հայտնաբերված բուցոլանակերպ կազմություններ ներկայանում են մեծ քանակութամբ Մուղնի, Հանալանք, Թեջերաբաղ և Արզնի գյուղերի շրջակայքը:

Ճիշտն ասած մենք դժվարանում ենք բացորոշապես հայտնել մեր կարծիքը վերոհիշյալ կազմությունների մասին, այն պարզ պատճառով, վոր արշավախմբի ընթացքում մեր հավաքած նմուշները դեռ օւսուումնասիրելու հնարավորություն չենք ունեցել:

Դիտվում է, վոր յերեվութապես նրանք ցույց են տալիս կազմություններ, բայց և այնպես մենք լուրջ պատճառներ ունենք վերապահ գտնվել նրանց մասին:

Գալով նրանց յերկրաբանական դիրքին ասենք թե Մուղնիի և Հանալանքի կազմությունները գտնվում են Բացախ գետի ձորահովտի խոր հատակում, այսինքն մոտավորապես 120 մետր խորություն ներկայացնող մի մեջ պատուվածքի հատակը: Պարզ է, վոր այդպիսի դժվարին պայմաններում ներկայացող հանքանյութերի շահագործումը ծնունդ է տալիս մեծամեծ ծախսերի: Դրեթե նույն դժվարությունները ներկայանում են Արզնիի շրջակայքը Չանդի ափերում հայտնաբերված

ու. Ե

կազմուցիւնները :

Իսկ գաւով թե շերաբաղի կազմուցիւններին  
նրանք զտնվում են շահագործման նպաստավոր պայ-  
մաններում, նրանք ներկայանում են մեծ քանակու-  
թյամբ <sup>5.000 000 - 1000 500</sup> գրեթե անսպառ և կարող են բավարարել մեր  
կարիքները յերկար տարիներ :

Վերոհիշյալ կազմուցիւնները Յերեվանից 13  
կիւղմետր հեռավորութիւն ~~տեղի~~ միայն ունեն :

Հանգանքի Բաղրամալիկյան Գրադարան .


ՏՐԻՊՈԼԻՏԻՆ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Տրիպոլիին ընդհանրապես մի տեսակ ալյուրա-  
 նման քարածուփ է բաղկացած դիատոմեաներից <sup>կապուրդ</sup> ամենամանր  
 ֆրյուստլներին: Նրա կազմության մեջ մտնում են  
 ափեվաքար և մի քանի ուրիշ մարմնիկներ նմանապես  
 արեվաքարային բաղադրություն ունեցող: Այս վեր-  
 ջինները ներկայանում են բազմատեսակ ձևվերով՝  
 շրջանակաձև, բոլորաձև, յեռանկյունաձև և խուլա-  
 կերպ: Գտնվում են <sup>և</sup> տեսակներ, վորոնց մեջ մարմնիկ-  
 ները մտնում են մեկը մյուսի մեջ ինչպես մի տուփ  
 և յուր կախարիչը: Դիատոմեաները մի տեսակ ջրախո-  
 տեր են, վորոնց կմախքային մասերը, պատյան, զրահ,  
 ֆրյուստյուղ, կազմում են փոքրիկ ըմպակներ սիլի-  
 ցային մի նուրբ ցանցի նման:

Շնորհիվ իրենց սիլիցա-մային պատյանի դիատո-  
 մերը քարացման են յենթարկվում շատ մեծ դյուրու-  
 թյամբ: Այսպիսի կազմություններ հայտնվում են  
 առաջին անգամ քարածխային կոչված դարեշրջանի <sup>կապուրդ</sup> հո-  
 դերի մեջ: Բայց վոչ մի պատճառ չունենք ասելու,  
 թե նրանք գոյություն չեն ունեցել ավելի հին դա-  
 րեշրջանների պատկանող հողերի մեջ, վորովհետև այս  
 ուղղությունամբ շատ քիչ հետազոտություններ են կատար-  
 վել: Հետաքրքրական է դիտել, վոր դիատոմեաները մի  
 կարգ անուշ ջրային կամ ծովային կազմությունների

մեջ ներկայանում են այնքան մեծ քանակությամբ,  
 վոր կարող են իսկ կազմել իսկական ժայռեր, վորո-  
 ՞րոնց տրիպոլի անունն են տալիս, վորովհետև սկզբ-  
 նական շրջաններում առաջին անգամ տրիպոլին հայտ-  
 նվել է Աֆրիկայի Տրիպոլիս կոչված քաղաքի շրջա-  
 կայքը:

Տրիպոլին սիլիցային չափազանց մեծ միակերպու-  
 թյուն ներկայացնող մի նուրբ փոշի յե: Գիատոմե-  
 ների ամենակարեվոր սուզախավերը գտնվում են Ֆեր-  
 Լինում, Բեյոնկսպերքին, Սիլիցիայում, Որանում,  
 ինչպես նաև Ֆրանսիայի Բյուդը- դում կոչված վայ-  
 րերում: Գերմանիայում Ոբերհոհեյի շրջակայքը տրի-  
 պոլային սուզախավի Թանֆրոլթյունը հասնում է 10-  
 մետրի, դիտված է, վոր նրա մի մատաչափ խորանարդը  
 պարունակում է իր մեջ 41-հազար միլիոն դիատոմե-  
 ների ֆրյուստելներ:



Գիատոմեների գույնը սովորաբար ճերմկեկ է +  
 դեղնորակ, կարմրորակ կամ կարմիր: Յերեվանի գա-  
 վառում ֆիֆֆֆ թեջերաբաղ գյուղի շրջակայքը հրա-  
 բխային արտադրանքների մեջտեղ արկղված տրիպոլին

ունի լճակային ծագում: Այս վայրում դեատոմեների սուզախավերը ձեվացնում են թերթանման սպիտակ մի կազմութուն, վորի գույնը գորշագույն է լինում, յերբ նա խոնավ է:

Անտարակույս թեջերաբաղի տրոպիկային կազմուց թյունը ծագում է առել յերրորդային կոչված դարեզլիսի վերջերը, յերբ Հայաստանի բարձրավանդակը ծածկված էր ծովլճակներով և լճակներով և յերբ նրա շրջակայքի հրաբուխները բորբոքման մեջ էին, ինչ-վոր ~~հիմնական~~ չափազանց նպաստավոր է դիատոմենների զարգացման տեսակետից:

Բացի սրանից Կոտայքի զավառամասում գտնվում է դիատոմային մի շարք կազմութուններ ցրված ավելի կամ նվազ գոգավոր հողամասերի մեջ: Ճիշտ է, վոր նրանք տարբերվում են թեջերաբաղի կազմութունից, թե կերտվածքի և թե բաղադրության տեսակետով: Որինակ Արզնիի տրիպոլային կազմութունը չունի թերթանման հորինվածք, նա ավելի սպիտակ է <sup>բարձր</sup> ~~բարձր~~ և չի պարունակում ոտար տարրեր, նա ներկայանում է փոխն ի փոխ կավային բարակ շերտերի հետ, վորի թանձրութունը հասնում է 2-4 ս. մետրի:


*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]*

32

Orficht Sphegomyia fusca-lynce:

*[Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.]*

